

፳፻፲፭ ዓ.ም. ጥቃትስ ተክክለኛ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1100

፩፻፲፭

“ Ար աշխարհում էապէնէր ” :

Իւշպէս առաջ ալ ըսեր ենք , նոր
աշխարհքի կապիկները այնպիսի ար-
տաքին նշաններ ունին որ իրենց միայն
յատուկ է և հին աշխարհքի կապիկ-
ները չունին . այս նշաններով է որ մէկ-
մէկէ կը զանաղանին : Այսոնց աղօրիք
ըսուած ակուանները առաջիններէն բազ-
մաթիւ է , և անսոնց պէս թուշերնէն
կախուած պարկեր չունին : Այսոնցմէ
շատին պոջը այնչափ ձկուն ու դալա-
րուն է որ ձեռաց տեղ կը գործածեն ,
ու անով ձիւզերէ կը կախուին , ու ծա-
ռէ ծառ կը ցատքեն : Իսկ բնաւորու-
թեամբ առաջիններէն տարբերութիւն
չունին :

Ու Հայութ այս նոր աշխարհքի կապիկ-
ները ամէնն ալ երկայն տրու ունին, բայց
ամենունն ալ նոյնպէս Ճկուն ու դիւրա-
թեք չէ : Արոնց որ արուը Ճկուն է՝ հան-
րական անուամբ Ատագու կ'ըստուին .
իսկ մէկալոնք՝ Առէուէն կամ Ատի կ'ը-
սուին :

ԱՅՓԱԺՈՒ : — Վասնիք զանազան
ցեղ կը բաժնուին և շատին պոչը ամէ^ւ
բողջ մազսա չէ . այլ ոմանցը կէսէն վար
լերկ է և ջղոտ , ոմանցն ալ ամբողջ
բրդոտ :

Երկ պոչ ունեցող Ասփաժուներուն
մէջ զիսաւորներն են Առար ու Շեւ
բառաձները :

Աշառ : — Ասոնց զլուխը բրգաձեւ, վարի ծամելիքը չափէ զուրս մեծ, ձևուրները միջակ երկախնութեամբ,

իւրաքանչիւրը հնգական երկայն մատուցներով : Իսոնք ռունացող էապիկ՝ ալ կ'ըսուեին իրենց ձայնին պատճառաւը, որ Ճանապարհորդաց ըսածին նայելով ինչուան մէկ ու կէս փարսախ տեղէն կը լսուի, և շատ զարհուրելի է . կարծես թէ, կ'ըսեն, բոլոր գաղանները մէկ եղած ձայնովին անտառներն ու լեռները կը թնդացընեն : Աւելի առաւտը արեւը ելլերու ատեն ու իրիկուան արեւը մանելու ժամանակ և փոթորկէ առաջ այս ահուելի ձայնը կը հանեն : Ու արքիրաֆ հեղինակն ու Ճանապարհորդը, որ հարաւային Ամերիկոյ կենդանեաց վրայ շատ դիտողութիւններ ըրած ունի, այս կապիկներուն վրայ ալ զարմանալի բաներ կը պատմէ : ԱՌԱՅՈՒԹ մէկ ամէն օր առաւտօտ իրիկուն ասոնք անտառներուն մէջ կը ժողվուին, մէկը բարձր տեղ մը կ'ելլէ ու ձեռքով մէկալոնց նշան կ'ընէ որ իր չորս կողմը գան նստին : Խըբոր ամէնքը կը տեղաւորուին ու կը լւեն, ինքը սոսկալի ձայն մը ձգած կ'աղաղակէ, որ հեռուեն լսովը կարծէ թէ բոլոր մէկ բերան կը պուան, երբոր ինքը կը լւէ՝ ձեռքով մէկալոնց նշան կուտայ որ իրեն պատասխան տան, ան ատեն ամէնը մէկէն ձայն մը կը ձգեն որ բոլոր անտառը կ'որստայ : Դարձեալ ձեռքով անոնց նշան կուտայ որ լսեն, ու երբոր անոնք բոլորովին ձայներնին կը կտրեն, ինքը նորէն կը սկսի իր առաջին աղաղակը, աս ալ լսմբննալէն ետեւ ժողովքը կը ցրուի :

Ուրիշ կողմանէ, ասոնք շատ վայրենի ու կատաղի են : Ամերիկայի մէկ քանի անտառներուն մէջ բազմաթիւ են և ողջ բոնելը զրեթէ անկարելի է : Դարձը ծառերու վրայ կը բնակին, և երբ որ կը տեսնեն որ թշնամին կը մօտենայ՝ ամէնը մէկ բերան ահուելի ձայնով կը պուան, ծառերուն չորցած Ճիւղերը վրան կը նետեն, ինչուան աղտեղութիւննին ձեռքերնին առած թշնամոյն վրայ կը նետեն :

Հատ արագաշարժ էն , Ճիւղէ Ճիւղ

1 Sla lepku 139:

2 ♀♀ · Sapajou.

3 Lus. Mycetes. q.q. Alouate.

1. ♀. Singes hurleurs.

կը ցատքեն և միայն նետովլ կամ հրացանովլ կը բռնուին, ան ալ թէ որ մէկէն մեռնին նէ . իսկ երբոր միայն վերաւորուին պոչերնին ամուր մը ձիւղի մը կը պլլեն ու մեռնելէն վերջն ալ օրերով օդուն մէջ այնպէս կախուած կը մնան : իժէ որ ասոնցմէ մէկը վիրաւորուի, բայց ոչ մահացու, քովը եղող կապիկները մէկէն կը վաղեն վրան հոգ կը տանին որպէս զի ձեռք շինայ . որը վերքը կը զննէ, կարծես թէ խորութիւնը կ'ուզէ իմաննալ, որը նետը դուրս կը հանէ, մէկն ալ վերքը ձեռքովլ կը սրբէ ու կը գոցէ, որպէս զի շատ արիւն

չվազէ, ուրիշ մ'ալ կ'երթայ տերեւներ կը փրցունէ, և ծամելովլ վրան կը զնէ : Վոնք այսպէս իրենց ընկերոջը վրայ հոգ տանելէն ետեւ կը նային որ թշնամիէն վրէժ ալ առնեն . ուստի ծառերէն վար կ'իջնան ու քար ժողված նորին ծառ կ'ելլեն կը սպասեն որ որսորդը անցնելու ատեն զարնեն : իժէ որ նոյն օրը չգիտցող ճանապարհորդ մը նոյն անտառէն յանկարծ անցնելու ըլլայ, վայէ գլխուն . վասն զի կապիկները զինքը թշնամի որսորդը կարծելովլ կարկուտիպէս քարերը գլխուն կը թափեն ու հոն զինքը քարերուն տակ կը թաղեն :



ՎՃԵԼ:

ՎՃԵԼ : — Վոնց ձեռուըներն ու պոչը բարակ ու չափէ դուրս երկայն են որ շիտակ քալելու ատեննին շատ տգեղ կ'երեան : Բնապատումներէն ումանք ասոնց կազմութեանը նայելովլ Այրդա-

կապէկ՝ անուաներ են, և քալուածքնին (Ճրամնկներուն շատ նման է : Բնութեամբ հեզ, վախկոտ և զանդաղաշարժ են, այնպէս որ զիրենք տեմնողը հիւանդ կը կարծէ . բայց տեղը զայ նէ

աղեկ արագաշարժութիւն ալ կը ցուցը նեն : Ասոնք խմբով բարձր ծառերու վրայ կը բնակին և երբոր կ'ուզեն մէկ ծառէն մէկալը անցնիլ, պոչով Ճիւղէ մը կը կախուին ու օդուն մէջ այնչափ կ'օրուին, որ եթէ աչքերնին կտրէ մէկէն պոչերնին կը քակեն ու երկրորդ ծառին վրայ կը ցատքէն : Աւելի զարմանալին է ասոնց գետէ անցնիլը առանց ջուր մանելու . շատուոր մէկտեղ գետին եղելը կը ժողվուին ուր տեղ որ զիմացէ զիմաց ծառ կայ և գետը այնչափ լայն չէ . մէջերնէն աւելի սրտոտն ու աւելի ուժովը ծառին այն Ճիւղին վրայ կ'ելլէ որ աւելի երկայն ու աւելի կրնայ ծափլ, և ձեռքով ծայրէն կը կախուի . ուրիշ մը կուգայ ասոր պոչէն կը բռնէ կը կախուի, երկրորդ մը երկրորդին պոչէն կը կախուի . այսպէս կարգաւ մէկմէկու պոչը բռնելով, կամ ըստ ոմանց՝ երկու ձեռքով մէկմէկու զլուս բռնելով, ու պոչերով ալ մէկմէկու պոչը բռնելով ծառէն կը կախուին : Երբոր ամէնքն ալ կը կախուին՝ կը սկսին չուանի պէս օրուիլ, այնչափ որ մինչև աչքերնին կտրէ թէ կրնան ջրոյն անդին նետուիլ, մէջերնէն զլսաւորնին ձայն մը կը հանէ, այն ձայնին վրայ ամէնը մէկէն ուժ տալով մէկզմէկ կը հրեն : Ա արի ծայրինը որ ուրիներուն հրելսված աւելի ուժ առած կ'ըլլայ գետին մէկալ զին կեցած ծառին հաստատուն Ճիւղէն ամուր կը բռնէ ու իր ետևինները իրեն կը քաշէ, և այսպէս ամէնն ալ զետոյն մէկալ զին կ'անցնին առանց թրթելու :

Այս կերպովնաև շատուոր մէկտեղ մէկ ծառէ մէկալ ծառ կը ցատքէն, թէ որ ծառերը մէկմէկէ շատկեկ հեռու ըլլան : Հասարակօրէն ասոնց էգերը մէկ կամ երկու ծագ մէկէն կը բերեն, և ուսերնին շալկած՝ ծառէ ծառ Ճիւղէ Ճիւղ կը ցատքէն :

Այս կապիկներուն կերակուրը պըտուղէ . անոր համար պտղոյ ատեն խիստ գէր կ'ըլլան : Պտղէն զատ կ'ուտեն նաև որդ, մամուկ և ձուկ՝ որ իրենց պոչովը կը բռնեն . իսկ թէ որ ծովային ժժմունքունք ուզուած է առանց աւելի կ'ախորժին : Ամերիկացիք ասոնց գեղեցկութեանն ու քաղցր բնաւորութեն համար շատ կը բռնեն ու կ'ընտանեցրնեն : Օ արմանալի է ասոնց ծագերուն իրենց մօրը վրայ ունեցած սէրը . այն-

ջուր կը ձգեն, ծայրը ժժմունքի մը մօտեցրնելով, երբոր անոնք պոչը միս կարծելով վրան կը պլուին, մէկէն պոչերնին վեր կը քաշեն որսով մէկտեղ, և քարտով կը ճզմեն ու կ'ուտեն :

Ասոնցմէ զատ կամ մէկ երկու ցեղալ այս տեսակին տակ, բայց յիշելու արժանի բան մը չունին :

Աաժու՝ — Այն Աափաժուները որոնց պոչը բրդոտ է, այս ցեղին տակ կ'երթան, որ նաև բուն Աաժաժու² կը սուին : Ասոնք շատ աշխոյժ, վառվը ուուն ու հեղ բնաւորութիւն ունին . շուտով կ'ընտանենան և այնպէս աչքաբաց ու հասկըցող են, որ մարդ կը զարմանայ վրանին : Աւրիշ Աափաժուներու պէս ասոնք ալ խմբով բարձր ծառերու վրայ կը բնակին, և իրենց կերակուրն է զլսաւորապէս պտուղ . բայց միջատ, որդ ու սողուններ ալ կ'ուտեն : Երբոր նեղը մանեն խեղճ ձայն մը կը հանեն լալու պէս, անոր համար բնապատումներէն ոմանք ասոնց անունը լայրդ կապէէ³ զրած են : Արշանայի ու Պլազիլի երկիրը ասոնք շատ բազմաթիւ են, և այն կողմերէն Աւրոպա կը բերուին :

Աւակուէն⁴՝ — Ամերիկայի այն կապիկները օրոնց պոչը ձկուն ու դիւրաթեք չէ⁵ ամէնը մէկտեղ Աակուէն կը կոչուին բնապատումներէն :

Այէֆրէէ⁶՝ — Աայիմիրի կամ Դիդի ըսուածները այս բաժանմանն տակ կ'իյնան : Ասոնց պոչը ջղոտ չէ, զլուխնին կլոր, ու դէմքերնին տափակ : Ը ատ աշխոյժ ու վառվը ուուն են . կը խաղան, կը պարէն և միջատներ կ'որսան, մանաւանդ մատմուկ՝ որ ամէն բանէ աւելի կ'ախորժին : Ամերիկացիք ասոնց գեղեցկութեանն ու քաղցր բնաւորութեն համար շատ կը բռնեն ու կ'ընտանեցրնեն : Օ արմանալի է ասոնց ծագերուն իրենց մօրը վրայ ունեցած սէրը . այն-

1 Լու . Cebus. Գղ . Sajou.

2 Գղ . Sapajou proprement dit.

3 Գղ . Singes pleureurs.

4 Գղ . Sagouin.

5 Գղ . Saimiri կամ Titit.

պէս որ երբոր մայրերնին կը զարնուի ,
մէկտեղ վար կ'իյնան ու մօրերնէն չեն
բաժնուիր : Այն կողմի Հնդիկները
զասոնք այս կերպով կ'օրսան և կը մեծ-
ցրնէն : Այս կասկիկները աւելի Պրա-
զիլ ու Կույանա կը գտնուին , և տասը
տասուերկուքը մէկտեղ անտառներուն
մէջ կը բնակին :

Սաֆի¹ : — Մանց պոչը ազուեսու պո-
ջն նման է , առաջիններէն իրենց մար-
մայն խիստ ու երկայն մազերովը կը

տարբերին , մանաւանդ պոջին վրային-
ները՝ որ թաւ ու աւելի երկայն են : Ա-
սոնց կրծող բառած ակուաները ուրիշ
ամէն կապիկներու ունեցած ակուանե-
րէն խաչոր են : Մանք ալ Ատիամունե-
րուն պէս Վմերիկայի անտառները կը
ընակին . բայց անոնց արագաշարժու-
թիւնը չունին , վասն զի իրենց պոջն ալ
անոնց պոջին պէս Ճկուն ու դիւրախեք
չէ :



Մշկապէհ կամ Ուհուելիլէ :

Մանր գեղեցիկ կենդանիներ
են , որ միայն Վմերիկա կը գտնուին . Ե-
րեսնին մազ չունի , մութ մնի գունովէ ,
քթերնուն ծակերը քովընտի են , գը-
լուխնին կլոր , պղտիկ . Ճակատնուն վը-
րայի մազերը սե գունով են , մէջտեղը
Ճերմակ . ականջնին կլոր , տափակ ,
բարակ ու անմազ : Վեկ ուրիշ կարգէ
գուրս գեղեցկութիւն մըն ալ ունին , որ
է ականջներնուն առջեկն դուրս ելած
երկու զարդերը ցցունքի³ ձեռվլ , Ճեր-

մակ ու երկայն մազերէ , կարծես թէ
կամաւ շիներ ու գլուխնին անցուցեր են ,
որ դէպ ՚ի ետև ականջներնուն վրայ
ծուելով , առջեկն նայելու ըլլաս նէ ա-
կանջ չերեւնար :

Լյեմնուն բողոքիքը լեցուն մազե-
րով զարդարուած է . վլերնուն ու կուրծ-
քերնուն վրայի մազերը բաց խահուեի
գունով գեղին խառն է , զիստերնին մա-
զուտ է , բրտութիւն կապած չէ , թու-
շերնէն ալ կախուած տոպրակ չունին :

Մանց մէկ ուրիշ գեղեցկութիւնն
ալ իրենց պոջն է . որ երկայն , բրդոտ
և վերտ վերտ մէյմը սե մէյմը Ճերմակ

¹ Գ. Հ. Saki.

² Լ. Ա. Arctopithecus. Գ. Հ. Ouestiti.

³ Տ. Ա. Սակալ.

մազերով զարդարուած է : Աշտուը-ներնուն եղունգները մեծ են ու սուր , ոտուընին մաի գունով : Վասնց բնու-թիւնն ալ ընտանի ու սիրելի է . կերած-նին պտուղ , ընդեղէն , որդ՝ նաև ձուկ է . չորս ոտքով կը քալէն :

Տայց ասանց ձազերը շատ տգեղ են , ամենեին լերկ՝ մազ մը չունին վրանին , մազերնին մէկ ամիսէն ետեւ կը սկսի զալ . երկու ամիսէն ալ աւելի պէտք է որ կատարեալ մեծերուն նմանին : Եկ-կու ամսու չափ կաթ կ'ուտեն , և քիչ մը մեծնալին ետեւ մայրերնին զիրենք կռնակնին կ'առնուն ու այնպէս ժուռ կուգան :

Աշտի¹ :

Վասնց արտաքին ձեռվ ուրիշ կա-պիկներէն և Աւիսթիթիներէն շատ կը տարբերին և աւելի զիշակեր կենդա-նեաց կը նմանին : Վասնց վարի ծամելի-քին վրայ վեց կրծող ակռայ կայ , խոկ ուրիշ կապիկներունը չորսէն աւելի չէ : Ետեւի ոտուընին առջեւններէն շատ երկայն են , ընդհակառակն ուրիշ կա-պիկներուն առջեւի ոտուըններն աւելի եր-կայն են քան թէ ետեւինները : Վասնք ալ անտառներու մէջ կը բնակին և իրենց սովորական կերակուրը պտուղ է . բայց թուզուններ ու պղտի չորբոտանիներ ալ կ'օրսան ու կ'ուտեն :

Վասնք հինգ ցեղ կը բաժնուին , և են բուն Աշտի , Անտրի , Լորի² , Ալա-կոյ և Դարսիէ :

Բառն Աշտի³ : — Վասնք միայն Աշ-տակաքար կղզին կը գտնուին , և զլուխ-նին սրածայր ըլլալուն համար աղութա-գլուխ էտաթիէ⁴ ալ կ'ըսուին : Վասնց վարի հերձող ակռաները վեց հատ են և վե-րինները չորս . պոչերնին երկայն ու թաւ է : Տապաւութիւն մէկտեղ կ'ապ-րին և կերակուրնին պտուղ է :

Անտրի⁵ : — Վասնք ալ Աշտակաս-

քար կղզին կը գտնուին և առաջիննե-րուն շատ կը նմանին , բայց վարի ծա-մելիքին վրայ չորս հերձող ակռայ ունին : Պոչերնին կարձ է , և ետեւի ոտուընին զրեթէ առջեւններուն կրկինն է , որով հեռուները կը ցատքեն . բնութեամբ հեղ և հասկրցող են : Աշտակաքարի հարաւային կողմի բնակիչները զասմնք կ'ընաանեցրնեն և շան տեղ որսի կը գործածեն :

Լորի⁶ : — Ալ սովորական անուամբ յանդառայլ կամ ծոյլ կ'ըսուի , արեւելեան Հնդկաստան կը գտնուին : Վասնց վրայ Օքագրիս մէջ խօսած ըլլալով՝ աւե-լորդ կը սեպենք հոս խօսքերնիս երկըն-ցընելը⁷ :

Ալակոյ⁸ : կամ Դարսիէ⁹ : — Վասնք գիշերային կենդանիներ են . առաջին-ները Վարիկէ կը գտնուին , երկրորդնե-րը Վոլուքեան կղզիները : Վասնց ետեւի ոտուընները չափէ զուրս երկայն են և աջուընին ալ խօսոր :

Ալպակոյ ըսուածները այս յատկու-թիւնս ունին որ իրենց ականջները չպ-դիկան ականջներուն պէս խօսոր են , և երբեմն այնպէս կը բանան որ բարակ ձայն մըն ալ ըլլայ կը լսեն . երբեմն ալ բոլորովինն ներս կը քաշեն որ բան չե-րենար , որով լսելիքին ճամբան կը գո-ցուի և ձայն չեն խմանար :

.....

Արդուս կեանք երկու զուռ ունի , մէկէն ներս կը մանէ , մէկալէն զուրս կ'ելլէ : Արշափ մէկէն հեռանաս , այն-չափ մէկալին կը մօտենաս . ու որչափ որ ելլերու զուան կը մօտիկնաս այնչափ աւելի մօտածէ վրան :

1 Գ. Տardigradus. q. q. Loris.

2 Լ. Տարփ. Երես. 355 :

3 Լ. Տարս. Գ. Գalago.

4 Լ. Օտուն. Գ. Տarsier.

1 Գ. Մaki.

2 Լ. Լemur. Գ. Մaki proprement dit.

3 Գ. Տ. Singe à tête de renard.

4 Լ. Լichanotus. Գ. Իndri.